



Աջակցություն Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայությանը  
Թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

## Առաքելության զեկույց

### SZS հանրության վիճակագրություն

Գործունեություն 24.2` Ընտրանքի օպտիմալացում

Ծրագրի մասնակից

Գեդիմանաս Սամուլիս (Լիտվայի վիճակագրական ծառայություն)

Հայաստան, 2012 թ. սեպտեմբերի 24-ից –27-ը

Տարբերակ` վերջնական տարբերակ

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն	Դանիայի վիճակագրական ծառայություն	Լիտվայի վիճակագրական ծառայություն

**Հեղինակի կոնտակտային տվյալներ**

Գեդիմանաս Սամուլիս

*Գեդիմինոս պողոտա 29*

*LT-01500 Վիլնուս*

*Լիտվա*

*Հեռ. +370 5 2364 621*

*Gediminas.Samuolis@stat.gov.lt*

## Բովանդակություն

1.	Ամփոփ նկարագիր	4
2.	Ընդհանուր մեկնաբանություններ	4
3.	Գնահատում և արդյունքներ	5
3.1	Ընտրանքի օպտիմալացում	6
3.2	Փորձնական ուսումնասիրության զեկույց	6
3.3	Ապագա S2S օգտագործման հետազոտությունների առաջարկներ	7
3.4	Ապագա S2S օգտագործման վիճակագրության ռազմավարությունը	7
4	Մինչև հաջորդ առաքելությունը անհրաժեշտ քայլեր	8

## Հավելվածներ

Հավելված 1	Տեխնիկական առաջադրանք	9
Հավելված 2	Առաքելության ծրագիրը	11
Հավելված 3	Հանդիպումներ անձանց հետ	13
Հավելված 4	Հետազոտություն և ընտրանքի արձևագրություններ	14
Հավելված 5	Փորձնական ուսումնասիրության զեկույցի առաջարկվող կառուցվածքը	15
Հավելված 6	Փորձնական ուսումնասիրության զեկույցի 4- գլխի “Փորձնական ուսումնասիրության արդյունքների վերլուծություն” առաջարկ	19
Հավելված 7	Բարդ հարցերի և տրամաբանական վերահսկման քննարկումներ	19
Հավելված 8	Փորձնական ուսումնասիրության զեկույցի 5-րդ գլխի “Փորձնական ուսումնասիրությունից հետազոտություններ” նախագիծ տարբերակ	21

## 1. Հապավումների ցանկ

ՇԵ	Շահառու երկիր
ԱՊ	Անդամ Պետություն
ԱՊՓ	Անդամ Պետությունների փորձագետներ
ՀՀ ԱՎԾ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
ԹՄԽ	Թվինինգի մշտական խորհրդատու
SU	Տեխնիկական առաջադրանք

## **2. Ամփոփ նկարագիր**

ՀՀ ԱՎԾ –ի կողմից իրականացվել է փորձնական հետազոտություն՝ ՏՀՏ օգտագործման վերաբերյալ պատահական շերտավորված ընտրանքի սկզբունքով, որի արդյունքում ընտրվել են 100 կազմակերպություններ, ինչպես նաև բոլոր ՀՀ նախարարությունները:

Ձեռնարկությունների արդյունքները պետք է օգտագործվեն միայն մեթոդաբանական վերլուծություն կատարելու համար՝ հաշվի առնելով խոշոր պատահական տարբերությունները: Հետազոտության նախարարություններին առնչվող արդյունքները կազմված են ՏՀՏ օգտագործող բոլոր նախարարություններից, և դրանք կարող են օգտագործվել վիճակագրական նպատակների համար սպառողների ավելի լայն խմբի կողմից, բացի նախագծի շահագրգիռ մարմիններից:

Ապագայում հետազոտության հարցաթերթիկները պետք է համապատասխանեն ԵՄ հետազոտության չափանիշներին՝ օգտագործելով ԵՄ մոդել հարցաթերթիկի փոփոխականները:

Փորձնական ուսումնասիրության զեկույցը և ՏՀՏ օգտագործման հետազոտության նախագիծ ռազմավարությունը պետք է հանդիսանան բաղադրիչ Զ-ի վերջնական արդյունքները՝ որպես ապագա ռազմավարության մշակման համար օգտագործվող նյութեր: Մինչև հաջորդ առաքելությունը ՀՀ ԱՎԾ կնախապատրաստի փորձնական ուսումնասիրության զեկույցի երկրորդ նախագիծը (մինչև 2012 թ. հոկտեմբերի 15-ը):

## **3. Ընդհանուր մեկնաբանություններ**

Առաքելության զեկույցի հիմնական մասը նախապատրաստվել է ԱՊ փորձագետի կողմից ՀՀ ԱՎԾ-ում իրականացվող առաքելության ընտացքում: ԱՊ փորձագետները ցանկանում են շնորհակալություն հայտնել առաքելության ընթացքում բոլոր ներկայացուցիչներին օժանդակության և տրամադրված առկա և ապագա իրավիճակի վերաբերյալ արժեքավոր տեղեկատվության համար, ինչպես նաև փորձագետների հանդեպ Հայաստանում գտնվելու ժամանակ ցուցաբերաց բարյացակամ օժանդակության համար:

Ընդհանուր նպատակը, ինչպես նաև Բաղադրիչ Զ-ի պարտադիր արդյունքն է առաջին հերթին նախքան ԹՎԻՆԻՆԳ նախագծի ավարտը իրականացնել, այնուհետև հրապարակել կազմակերպությունների և հաստատությունների կողմից ՏՀՏ-ի օգտագործման հետազոտության արդյունքները, ինչպես նաև վերապատրաստել ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցներին տեղեկատվական հանրությանը առնչվող խնդիրների վերաբերյալ: Այնուամենայնիվ, առաջին արդյունքը վերափոխվեց ամբողջական մեթոդաբանության մշակումով և փորձնական ուսումնասիրությունների իրականացմամբ:

Պլանավորված գործունեությունները և գործունեության ակնկալվող արդյունքները հնարավոր եղավ իրագործել տես՝ հավելված 1՝ տեխնիկական առաջադրականք և հավելված 2՝ շաբաթվա ծրագիրը:

## 4. Գնահատում և արդյունքներ

### 3.1 Ընտրանքի օպտիմալացում

Շերտավորումը պետք է իրականացվի ըստ տնտեսական գործունեության և աշխատակիցների թվաքանակի: Ընտրանքի նախագիծը և արդյունքում ստացվող ընտրանքի չափսը նման հետազոտության համար պետք է համապատասխանեցվեն ճշգրիտ, վստահելի և ներկայացուցչական արդյունքներ ստանալու համար: Անհրաժեշտ է արձանագրել նպատակների նվաճում բոլոր համամասնությունների համար, ինչպես նաև համակցությանը առնչվող տարբեր ենթախմբերի համամասնությունների համար:

Գնահատված ստանդարտ սխալը ցանկացած ցուցանիշի/ փոփոխականի համար (լինի դա փոփոխական, կամ ընդամենը) չպետք է գերազանցի 2 տոկոսը ընդհանուր համակցության համար և չպետք է գերազանցի 5 տոկոսը համակցության տարբեր ենթախմբերի համար:

Պարբերական հետազոտության ընտրանքի պլանի խնդիրները հետևյալն են՝

- Ակնկալվում է, ունի S2S օգտագործումը 11 մարզերի կողմից գգալիորեն տարբերվում է
- Կազմակերպության ժողովրդագրությունը կենտրոնացված է մայրաքաղաքում, որի արդյունքում կնկատվեն շատ “ դատարկ”, կամ առանց տեղեկատվության վանդակներ ըստ տարածաշրջանների շերտավորված համակցության մեջ:

Ձեռնարկությունների ժողովրդագրությունը շատ կենտրոնացված է Երևան քաղաքում, և հետազոտության արդյունքները կարելի է տարբերակել որպես մայրաքաղաք և մնացած մարզեր: Սակայն Երևանից հեռու գտնվող այլ մարզերում առկա են քիչ քանակով ձեռնարկություններ (որոնք ունեն 10 և ավելի աշխատակիցներ), և յուրաքանչյուր մարզի վերաբերյալ վիճակագրության արտադրանքը բարդ է՝ հաշվի առնելով տվյալների գաղտնիությունը:

## **Ընտրանքի որոշում**

Հիմնվելով բիզնես ռեգիստրի տվյալների վրա (չափսի խմբեր, NACE, մարզեր ) սեմինարի ընթացքում առաջարկվեցին վեց տարբեր սցենարներ (մասնակիցներ՝ առևտրի և այլ ծառայությունների բաժին, մեթոդաբանության և բիզնես ռեգիստրի բաժին): Սցենարները նկարագրված են Հավելված -4-ում:

ՇԵ Բաղադրիչի ղեկավարի մասնակցությամբ սեմինարի և քննարկումներից հետո՝ երկու այլընտրանքներ ունեցան հետևյալ սահմանափակումները՝

1. Ամենահավանական մոտեցումը՝ մասնավորապես հետազոտության առաջին տարվա համար՝ ընտրանքի կատարում միայն ազգային մակարդակի վրա ( ԵՄ կանոնակարգին համաձայն և ԵՄ երկրների փորձին համաձայն՝ օրինակ՝ ինչպես Լիտվայում և Դանիայում):

2. Ընտրանք Երևանի համար (չափսի խմբերով և NACE 2) և մնացած բոլոր մարզերը (միայն NACE 2 բաշխումով)

Վերջնական որոշումը պետք է կայացվի շահառու մարմինների հետ հանդիպումից հետո:

ԱՊ փորձագետների առաջարկությունները ընտրանքի համար հետևյալն են՝

- Ընտրանքը պետք է լինի շերտավորված պատահական ընտրանքով՝ հիմնվելով ռեգիստրի վրա հիմնված տվյալների վրա
- Բնակչության շերտավորումը կատարելու համար պետք է օգտագործվի աշխատողների թվաքանակը և տնտեսական գործունեությունը (NACE rev. 2);
- Փոքր վանդակների, կամ խմբերի բոլոր ձեռնարկությունները պետք է ներառվեն ընտրանքի մեջ (“փոքր” օրինակ՝ 15 միավորից ավելի քիչ – պետք է սահմանվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից);
- Ցանկացած NACE rev. 2 խմբում ձեռնարկությունների ստրատան պետք է կազմվի ըստ աշխատակիցների թվաքանակի, օր՝ չափսի խմբեր;
- Նյումանի օպտիմալ դասակարգման գործընթացը (կամ այլ հնարավորություններ ՀՀ ԱՎԾ-ի Մեթոդաբանության բաժնի առաջարկություններին համաձայն ) պետք է օգտագործվի յուրաքանչյուր ստրատայի համար ընտրանքի չափսը սահմանելու համար;
- Ցուրաքանչյուր ստրատայում պետք է կիրառվի պարզ պատահական ընտրանք

## **3.2 Փորձնական ուսումնասիրության**

Փորձնական ուսումնասիրության զեկույցը կհանդիսանա Բաղադրիչ Զ-ի վերջնական արդյունքը՝ ՏՀՏ օգտագործման հետազոտության նախագիծ ռազմավարության հետ համատեղ, որոնք պետք է նպաստեն հետագա հետազոտությունների ռազմավարության մշակման համար: Զեկույցի մեջ պետք է ներկայացվեն փորձնական ուսումնասիրության արդյունքները՝ ներառյալ մեթոդաբանական փորձը և հետագա հետազոտություններին առնչվող մտապահումները:

## **Արդյունքների օգտագործում**

Հրապարակման մեջ պետք է հստակորեն նշվի, որ ձեռնարկություններին առնչվող արդյունքները ենթակա են միայն մեթոդաբանական վերլուծությունների համար, քանի որ փոքր ընտրանքը ունի բարձր տատանումների աստիճան որպես վիճակագրական

արդյուքներ դրանց օգտագործելու համար: Այնուամենայնիվ, հետազոտության հաստատություններին առնչվող տեղեկատվությունը պարունակում է բոլոր նախարարություններից: Այսպիսով, կարելի է մտապահել արդյոք այս տեղեկատվությունը կարող է արդյունավետ լինել նախագծի շահառուներից բացի ավելի լայն խմբի սպառողների համար:.

### **Առաջարկվող կառուցվածք**

Փորձնական ուսումնասիրության զեկույցի առաջարկվող կառուցվածքը ներկայացվել է Ձ4.1 զեկույցում: Որոշ հարցեր, որոնք պետք է ներկայացվեն զեկույցի 3-րդ գլխում նշված են հավելված 5-ում: Ավելին, փորձնական ուսումնասիրության ընթացքում առաջացած խնդիրները ցանկացած հարցի վերաբերյալ պետք է քննարկվեն՝ շեշտը դնելով այդ հարցի լուծմանը հետագա հետազոտությունների հեռանկարում:

Փորձնական ուսումնասիրության 1-4 գլուխները ներկայացվել և համաձայնեցվել են ՀՀ ԱՎԾ-ի կողմից առաքելության ընթացքում:

### **Առաջարկություն փորձնական հետազոտության 4-րդ գլուխը կրճատելու վերաբերյալ**

ԱՊ փորձագետը արեց հետևյալ հստակ առաջարկությունները փորձնական հետազոտության գլուխ 4-ում արդյունքները ավելի հակիրճ ներկայացնելու համար (որոնք հետագայում կարող են օգտագործվել մամուլի հաղորդագրության մեջ):

1. Ձեռնարկություններում համակարգիչների և Ինտերնետի օգտագործումը
2. Ինտերնետ կապի տեսակը
3. Վեր կայքերը և դրանց հնարավորությունները
4. Հանրային մարմինների հետ Ինտերնետի միջոցով շփման նպատակը
5. Ձեռնարկությունների միջև էլեկտրոնային սովյալների փոխանակում
6. Էլ- բիզնեսի համար S2S համակարգեր ունեցող ձեռնարկություններ
7. Էլեկտրոնային ցանցերի միջոցով էլ կոմերցիա

Փորձնական ուսումնասիրության զեկույցի գլուխ 4-ի կրճատման առաջարկը (տես հավելված 6) ներկայացվել է ՀՀ ԱՎԾ-ին:

### **3.3. Ապագա S2S օգտագործման հետազոտությունների առաջարկ**

Ձեռնարկություններում փորձնական ուսումնասիրության փորձը և արդյունքները քննարկվեցին Առևտրի և այլ ծառայությունների բաժնի և ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ: Ապագա հետազոտություններում հարցաթերթիկը պետք է կրկին համապատասխանի ԵՄ հետազոտության չափանիշներին՝ օգտագործելով ԵՄ մոդել հարցաշարի հարցաթերթիկը: Այնուամենայնիվ, այն հարցերը, որոնք չեն համապատասխանում Հայաստանին կարելի է հանել և դրա փոխարեն կենտրոնանալ որոշ կարևոր ցուցանիշների համար ժամանակային շարքերի կազմման վրա:

Հավելված 7-ում ներկայացված են որոշ բարդ հարցեր, ինչպես նաև հարցերի միջև տրամաբանական կապը:

### **3.4. Ապագա S2S-ի օգտագործման վիճակագրության ռազմավարություն**

ԱՊ փորձագետը առաջարկեց բաղադրիչ Զ վերջնական արդյունքը բացի S2S-ի օգտագործման վիճակագրության մշակումից, մշակել նաև ապագա S2S օգտագործման

ռազմավարություն: Նման հետազոտության հնարավոր տարրերը կներկայացվեն շահառուներին փորձնական ուսումնասիրության զեկույցի մեջ: Շահառուները հնարավորություն կունենան ներկայացնել իրենց դիտողությունները Ձ6 գործունեության շրջանակում իրականացվելիք սեմինարի ընթացքում, որոնց վրա հիմնված կլինի ռազմավարությունը:

Առաքելության ընթացքում մշակվեց փորձնական ուսումնասիրության զեկույցի 5 –րդ գլուխը “ Փորձնական հետազոտությունից պարբերական հետազոտություն”, որը ներկայացված է հավելված 8-ում:

## **5. Մինչև հաջորդ գործունեությունը անհրաժեշտ քայլերը**

Փորձնական ուսումնասիրության զեկույցը կամփոփվի նախքան Ձ6 վերանայման գործունեությունը: Ձեկույցի նյութերը պետք է ներշնչանք հանդիսանան Հայաստանում ՏՀՏ հետազոտությունների երեք տարվա ռազմավարության մշակման համար:

ԹՄԽ-ն առաջարկեց ՏՀՏ վիճակագրության բաղադրիչի արդիականացված աշխատանքային ծրագիրը, որը քննարկվեց առաքելության ընթացքում և հաստատվեց ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Շեշտը դրվում է վերջին առաքելության և նախքան այդ առաքելությունը ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվող անհրաժեշտ քայլերի վրա:

- Փորձնական ուսումնասիրության զեկույցի հաջորդ նախագիծ տարբերակը պետք է նախապատրաստվի մինչև հոկտեմբերի 15-ը և թարգմանվի՝ մինչև հոկտեմբերի 19 –ը:
- Փորձնական ուսումնասիրության զեկույցը կհաստատվի մինչև նոյեմբերի 9 շահառուներին ներկայացնելու համար
- Շահառուներին 2012 թ. նոյեմբերին կայանալիք վերջնական սեմինարի հրավերքի ներկայացում (20 նոյեմբերի (երեքշաբթի), կամ 21 նոյեմբերի (չորեքշաբթի)).

# Հավելվածներ

## Հավելված 1: Տեխնիկական առաջադրանք (Ձ4.2); 2012 թ. սեպտեմբերի 24–27-ը

Բաղադրիչ Ա Որակի Կառավարում  
Բաղադրիչ Բ Բիզնես Ռեզիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն  
Բաղադրիչ Գ ՀՆԱ –ի Ամբողջականության  
Բաղադրիչ Դ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում  
Բաղադրիչ Ե Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս  
**Բաղադրիչ Ձ** Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն

### Բաղադրիչի պարտադիր արդյունքն է

Բաղադրիչ Ձ-ի պարտադիր արդյունքն է “ Ձեռնարկությունների և հաստատությունների ՏՀՏ փորձնական հետազոտությունները կիրականացվեն և տվյալները կհրապարակվեն” (*Պայմանագրում նշված “հետազոտությունները” փոխարինվել է “փորձնական ուսումնասիրությունների”*):

### **Գործունեություն Ձ4.2 Ընտրանքի օպտիմալացում**

#### **1. Գործունեության նպատակը**

Գործունեության նպատակն է որոշել ձեռնարկություններում ՏՀՏ օգտագործման հետազոտության շերտավորման մակարդակը և ընտրանքի չափսը:

#### **2. Գործունեության ակնկալվող արդյունքները**

Գործունեության ակնկալվող արդյունքներն են՝

- Փորձնական ուսումնասիրությունների փորձի և արդյունքների վերաբերյալ զեկույցի քննարկում և հետագա զարգացում;
- Ձեռնարկություններում ՏՀՏ օգտագործման ապագա տարածաշրջանային մակարդակի հետագա տարածման աստիճանի քննարկում;
- Ձեռնարկությունների վերլուծությունը բիզնես ռեզիստրում;
- Ընտրանքի և շերտավորման խնդիրների որոշում

#### **3. Նախագծի մասնակիցներ**

Պրն.Գագիկ Անանյան, Վիճակագրական պետական խորհրդի անդամ (ՇԵ Բաղադրիչի ղեկավար:)

Տկն. Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների բաժնի պետ;  
Տկն.Ինգա Բարոյան, Առևտրի և այլ ծառայությունների բաժնի առաջատար մասնագետ;

Պրն. Գեղիմանաս Սամոյիս, Լիտվայի վիճակագրության տեղեկատվական  
տնտեսության բաժնի պետ

Հավելված 2: ԱՊ փորձագետի հանդիպման ծրագիրը

Ժամը	Վայրը	Միջոցառումը	Նպատակը / միջոցառման մանրամասները
Երկուշաբթի, սեպտեմբերի 24, առավոտյան	Կոնգրես հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շարաքվա ծրագրի քննարկում
Կեսօր	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Ընթացիկ կարգավիճակը՝ ՇԵ բաղադրիչի ղեկավարի ներկայացում 2012 թ. մայիս ամսին իրականացված Չ4.1 գործունեությունից հետո առաջընթացների և զարգացումների վերաբերյալ: Տարածման մակարդակների քննարկում
Երեքշաբթի, սեպտ 25, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Սեմինար	Բիզնես ժողովրդագրության քննարկում: Մասնակիցներ՝ առևտրի և այլ ծառայությունների բաժին, մեթոդաբանության բաժին և բիզնես ռեզիստրի բաժին: Ձեռնարկություններում ՏՀՏ օգտագործման հետազոտության ընտրանքի հետևանքները համապատասխան տարածման մակարդակով:
Կեսօր	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Առևտրի և այլ ծառայությունների բաժնի հետ	Ընտրանքի հարցերի հետազոտ քննարկում, ներառյալ տարբեր սցենարների հնարավորություններ առաջին հետազոտության տարվա համար հաջորդող տարիների հետ համեմատ
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Առևտրի և այլ ծառայությունների բաժնի հետ	Ձեռնարկություններում և հաստատություններում ՏՀՏ օգտագործման փորձնական ուսումնասիրության նախագիծ զեկույցի քննարկում
Չորեքշաբթի, սեպտեմբերի 26, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Նախագծի հետագա ընթացքի համար աշխատանքային ծրագրի նախագծի կազմում

	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Առևտրի և այլ ծառայությունների բաժնի հետ	Ծրագրի հետագա ընթացքի աշխատանքային պլանի քննարկում
Կեսօր	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ քաղաքիչի ղեկավարի հետ	Նախնական եզրակացությունների քննարկում 1. Փորձնական ուսումնասիրության զեկույցի աշխատանքները 2. Ձեռնարկություններում ՏՀՏ օգտագործման հետագա հետազոտության ընտրանքը 3. Արյոյոք ՀՀ ԱՎԾ –ն պետք է իրականացնի հաստատություններում ՏՀՏ-օգտագործման հետազոտություն 4. Ծրագրի հետագա ընթացքի համար աշխատանքային պլան
Հինգշաբթի, սեպտեմբերի 27, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Առաքելության զեկույցի նախապատրաստման աշխատանքներ, նախապատրաստում շաբաթվա ծրագրի ամփոփմանը
Կեսօր	ՀՀ ԱՎԾ	Ամփոփում ՇԵ նախագծի ղեկավարի հետ	Ամփոփում և եզրակացություններ: Հետագա առաքելության հետևությունները և ՇԵ փորձագետների կողմից մինչև հաջորդ առաքելությունը կատարվելիք աշխատանքների քննարկումը

### **Հավելված 3: Հանդիպումներ անձանց հետ**

*Առաքելության ընթացքում ԱՊ փարձագետը հանդիպել է հետևյալ անձանց հետ*

Գագիկ Անանյան անդամ	Վիճակագրական պետ. խորհուրդի
Գայանե Վարդանյան, 1-ին կարգի մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Անահիտ Առաքելյան, 1-ին կարգի մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Աննա Անտոնյան	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Արևիկ Սագումյան, Առաջատար մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Ինգա Բարոյան, Գլխավոր մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Հեղինե Բաբայան, Գլխավոր մասնագետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Անահիտ Հարությունյան – Բաժնի պետ	Առևտրի և այլ ծառայությունների բաժին
Գարիկ Խաչատրյան – Գլխավոր մասնագետ	Բիզնես ռեգիստրի բաժին
Արմինե Շաբոյան	
Մեթոդաբանության բաժին	

## Հավելված 4: Հետազոտության և ընտրանքի ալբերանքներ

Առաքելության ընթացքում կազմակերպվեց քննարկում կյոթ սեղանի շուրջ Առևտրի և այլ ծառայությունների, բիզնես ռեզիստրի և մեթոդաբանության բաժինների մասնակցությամբ Քննարկման ակնկալվող արդյունքներն էին՝

- Հետագա S2S օգտագործման հետազոտության մարզային մակարդակի մանրամասնությունների քննարկում
- Բիզնես ռեզիստրում ձեռնարկությունների վերլուծությունը;
- Ընտրանքի և շերտավորման հարցերի որոշում

Ընտրանքի և շերտավորման մասին՝

Շերտավորումը պետք իրականացվի տնտեսական գործունեության և աշխատակիցների թվաքանակի համաձայն: Ընտրանքի ձևաչափը և արդյունքում ստացվող ընտրանքի չափսը պետք է համապատասխանեն հետազոտության ճշգրիտ, վստահելի և ներկայացուցչական արդյունքներ ստանալու համար: Նպատակին անհրաժեշտ է հասնել բոլոր համամասնությունների համար, ինչպես նաև համակցության տարբեր ենթախմբերին առնչվող համամասնությունների համար: Գնահատված ստանդարտ սխալը ցանկացած ցուցանիշի/փոփոխականի համար (լինի դա համամասնություն կամ ընդհանուր արժեք) չպետք է գերազանցի 2 տոկոսը ամբողջ համամասնության և 5 տոկոսը՝ համակցության տարբեր ենթախմբերի համար:

Ապագա հետազոտությունների ընտրանքի պլանը՝ խնդիրները հետևյալն են՝

- S2S օգտագործման տարբերություն 11 մարզերում շատ զգալի է
- Կազմակերպությունների ժողովրդագրությունը կենտրոնացված է մայրաքաղաքում՝ Երևանում և ըստ մարզերի տարանջատված վանդակներում շատ են “դատարկ” ինֆորմացիա պարունակող վանդակներ:

Կազմակերպությունների ժողովրդագրությունը կենտրոնացված է Երևանում, և հետազոտության արդյունքներում նվազագույնը պետք է տարբերակվեն մայրաքաղաքը և եկրի այլ մարզերը: Այնուամենայնիվ, այլ մարզերում կան ընդամենը մի քանի կազմակերպություններ (10, կամ ավելի աշխատակից ունեցող), և հաշվի առնելով տեղեկատվության գաղտնիությունը՝ բարդ է արտադրել վիճակագրություն յուրաքանչյուր մարզի համար:

Երևանը և այլ մարզերի հանրագումարը

	Համակցությունը Երևան քաղաքի համար						Համակցությունը մարզերի համար					
	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM
<b>C</b>	275	52	43	35	17	422	159	46	33	17	14	269
<b>D</b>	7	2			5	14	28	2	2	1	2	35
<b>E</b>	3	2	2	6	4	17	20	5	1	2	1	29
<b>F</b>	103	28	21	19	7	178	93	24	30	21	1	169
<b>G</b>	403	66	42	29	11	551	207	17	13	5		242
<b>H</b>	137	32	25	11	9	214	51	17	12	1	3	84
<b>I</b>	156	30	18	5	1	210	36	8	2			46
<b>J</b>	76	27	21	5	6	135	17	3	2	1		23
<b>L</b>	50	15	10	2	1	78	4	1		2		7
<b>69-74</b>	104	21	23	19	2	169	16		2	2		20
<b>N</b>	58	18	9	11	3	99	13	3	2	1		19

95.1	1	1				2						0
Total	1373	294	214	142	66	2089	644	126	99	53	21	943

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ և ԸՆՏՐԱՆՔԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

### Այլընտրանք 1՝ Ամբողջական (համատարած) հետազոտություն

Շերտավորումը “հիմնական տնտեսական գործունեության” (ըստ NACE 2) և “միջին աշխատակիցների թվաքանակի” համաձայն

NACE	Աշխատակիցների թվաքանակը					SUM
	10-29	30-49	50-99	100-249	250+	
C	434	98	76	52	31	691
D	35	4	2	1	7	49
E	23	7	3	8	5	46
F	196	52	51	40	8	347
G	610	83	55	34	11	793
H	188	49	37	12	12	298
I	192	38	20	5	1	256
J	93	30	23	6	6	158
L	54	16	10	4	1	85
69-74	120	21	25	21	2	189
N	71	21	11	12	3	118
95.1	1	1	-	-	-	2
Ընդամենը	2,017	420	313	195	87	3,032

Ամբողջական հետազոտությունը լավ որոշում է հետազոտության իրականացման առաջին տարվա համար, քանի որ այն լավ հիմք է ստեղծում հետագա տարիներին իրականացվող ընտրանքային հետազոտությունների համար: Ընտրանքի չափսը հավասար կլինի 3,032 ձեռնարկությունների (ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական բիզնես ռեգիստրի ժողովրդագրական տեղեկատվության համաձայն):

Այնուամենայնիվ, սա բավականին ծախսատար լուծում է: Նաև առկա է յուրաքանչյուր մարզի վերաբերյալ տվյալների հրապարակման խնդիր՝ գաղտնիության սկզբունքները պահպանելու համար: Առկա են 1-2 կազմակերպություններով շատ վանդակներ:

### Այլընտրանք 2. Ընտրանք ըստ տնտեսական գործունեության և ձեռնարկության չափսի

Հետազոտության ծախսերի և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման լավագույն միջոցն է ընտրանքային հետազոտության իրականացումը: Այն դեպքում, երբ գործ ունենք մեկ ընտրանքի հետ (առանց մարզային բաշխման) շերտավորված ըստ տնտեսական գործունեության և չափսի (միջին աշխատակիցների թվաքանակը), ընտրանքում կազմակերպությունների քանակը համեմատաբար փոքր է:

NACE	Աշխատակիցների թվաքանակը					SUM
	10-29	30-49	50-99	100-249	250+	
C	109	25	19	13	8	173
D	9	4	2	1	7	23

E	6	7	3	8	5	29
F	49	13	13	10	8	93
G	153	21	14	9	11	207
H	47	12	9	12	12	93
I	48	10	5	5	1	69
J	23	8	6	6	6	49
L	14	4	10	4	1	33
69-74	30	5	6	5	2	49
N	18	5	11	12	3	49
95.1	1	1	0	0	0	2
Total	505	114	98	85	64	865

Ընտրանքի չափսը հավասար կլինի մինչև 900 կազմակերպությունների, այն դեպքում, եթե բոլոր կազմակերպությունները ընտրված են փոքր խմբերից, որոնք սահմանված են որպես խմբեր (NACE rev.2 և չափսի կոմբինացիա) 15 միավորից քիչ), և կազմակերպությունների մնացած 25 տոկոսը ընտրվում է յուրաքանչյուր խմբի շրջանակից: Մինչդեռ չկա մարզային վիճակագրություն ունենալու հնարավորությունը:

**Այլընտրանք 3. Երկու առանձին հետազոտության ընտրանքներ – ընտրանք Երևան քաղաքի համար և ամբողջական հետազոտություն մնացած մարզերի համար (առանց մարզային բաշխման)**

	Ընտրանք Երևան քաղաքի համար						Մարզերի համակցության ընդհանուր արժեքը					
	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM
C	69	13	11	9	4	106	159	46	33	17	14	269
D	7	2	0	0	5	14	28	2	2	1	2	35
E	3	2	2	6	4	17	20	5	1	2	1	29
F	26	7	5	5	7	50	93	24	30	21	1	169
G	101	17	11	7	11	146	207	17	13	5		242
H	34	8	6	11	9	69	51	17	12	1	3	84
I	39	8	5	5	1	57	36	8	2			46
J	19	7	5	5	6	42	17	3	2	1		23
L	13	15	10	2	1	41	4	1		2		7
69-74	26	5	6	5	2	44	16		2	2		20
N	15	5	9	11	3	42	13	3	2	1		19
95.1	1	1	0	0	0	2						0
Total	352	89	69	66	53	628	644	126	99	53	21	943

Այս այլընտրանքի կիրառման արդյունքում կստացվեն արդյունքներ Երևան քաղաքի և այլ մարզերի կազմակերպությունների կողմից SՀS-ի օգտագործման վերաբերյալ: Մինչդեռ, կա խնդիր մարզերի հետ (մոտ 15 դասարկ խմբեր; 20 խմբեր 1 կամ 2 կազմակերպություններով). Ընտրանքի չափսը մոտ կլինի 1,600 կազմակերպությունների:

**Այլընտրանք 4. Երկու առանձին ընտրանքներ՝ ընտրանք Երևան քաղաքի և ընտրանք այլ մարզերի համար (առանց մարզային բաշխման)**

	Ընտրանք Երևան քաղաքի համար						Ընտրանք այլ մարզերի համար					
	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM
<b>C</b>	69	13	11	9	4	106	40	12	8	4	14	78
<b>D</b>	7	2	0	0	5	14	7	2	2	1	2	14
<b>E</b>	3	2	2	6	4	17	5	5	1	2	1	14
<b>F</b>	26	7	5	5	7	50	23	6	8	5	1	43
<b>G</b>	101	17	11	7	11	146	52	4	13	5		74
<b>H</b>	34	8	6	11	9	69	13	4	12	1	3	33
<b>I</b>	39	8	5	5	1	57	9	8	2			19
<b>J</b>	19	7	5	5	6	42	4	3	2	1		10
<b>L</b>	13	15	10	2	1	41	4	1		2		7
<b>69-74</b>	26	5	6	5	2	44	4		2	2		8
<b>N</b>	15	5	9	11	3	42	13	3	2	1		19
<b>95.1</b>	1	1				2						
<b>Total</b>	352	89	69	66	53	628	174	48	52	25	21	319

Սա կնվազեցնի ընտրանքի չափսը և այն հավասար կլինի մոտ 950 կազմակերպությունների: Մինչդեռ առկա է խնդիրը մարզերի հետ, կան շատ խմբեր 1 կամ 2 ձեռնարկություններով:

**Այլընտրանք 5. Երկու առանձին ընտրանքներ՝ – Երևան ք. ընտրանք և այլ մարզերի ընտրանք (առանց մարզային բաշխման), ըստ տնտեսական գործունեության և աշխատակիցների թվաքանակի**

4-րդ այլընտրանքը կարելի է իրականացնել առանց մարզային շերտավորման տնտեսական գործունեությունների համաձայն, կամ առանց կազմակերպությունների չափսի դասի: Այս դեպքում անտեսվել են փոքր խմբերը՝

**Ընտրանք 5.1 Ընտրանք Երևան քաղաքի և ընտրանք մարզերի համար միյան տնտեսական գործունեությունների համաձայն**

	Ընտրանք Երևան քաղաքի համար						Մարզերի հանրագումարը
	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM	Sample total
<b>C</b>	69	13	11	9	4	106	67
<b>D</b>	7	2	0	0	5	14	9
<b>E</b>	3	2	2	6	4	17	7
<b>F</b>	26	7	5	5	7	50	42
<b>G</b>	101	17	11	7	11	146	61
<b>H</b>	34	8	6	11	9	69	21
<b>I</b>	39	8	5	5	1	57	12
<b>J</b>	19	7	5	5	6	42	6
<b>L</b>	13	15	10	2	1	41	7

<b>69-74</b>	26	5	6	5	2	44	5
<b>N</b>	15	5	9	11	3	42	5
<b>95.1</b>	1	1	0	0	0	2	0
<b>Total</b>	352	89	69	66	53	628	241

Այլընտրանք 5.1 դեպքում ընտրանքը չափսը հավասար կլինի 900 կազմակերպությունների:

**Այլընտրանք 5.2 Ընտրանք Երևան քաղաքի և ընտրանք մարզերի համար միայն ձեռնարկության չափսին համաձայն**

	Երևան						Մարզերի հանրագումարը					
	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM
<b>Total</b>	69	13	11	9	4	106	43	12	13	6	5	80
<b>C</b>	7	2	0	0	5	14						
<b>D</b>	3	2	2	6	4	17						
<b>E</b>	26	7	5	5	7	50						
<b>F</b>	101	17	11	7	11	146						
<b>G</b>	34	8	6	11	9	69						
<b>H</b>	39	8	5	5	1	57						
<b>I</b>	19	7	5	5	6	42						
<b>J</b>	13	15	10	2	1	41						
<b>L</b>	26	5	6	5	2	44						
<b>69-74</b>	15	5	9	11	3	42						
<b>N</b>	1	1	0	0	0	2						
<b>95.1</b>	352	89	69	66	53	628						

Այլընտրանք 5.2 դեպքում ընտրանքը հավասար կլինի 700-ից կազմակերպություններից մի փոքր ավելին:

**Այլընտրանք 6. Ընտրանք Երևան քաղաքում և ընտրանք բոլոր մարզերում առանց ըստ տնտեսական գործունեության և ձեռնարկության չափսի բաշխման**

	Yerevan						Aragatzotn	Ararat	Armavir	Gegarkunik	Lory	Kotayk	Shirak	Syuniq	Vayoc Dzor	Tavush	SUM
	10-29	30-49	50-99	100-249	250+	SUM	Ընդհանուր բոլոր մարզերում										
							49	120	71	58	127	220	103	97	43	55	943
<b>C</b>	69	13	11	9	4	106											
<b>D</b>	7	2	0	0	5	14											
<b>E</b>	3	2	2	6	4	17											
<b>F</b>	26	7	5	5	7	50											
<b>G</b>	101	17	11	7	11	146											
<b>H</b>	34	8	6	11	9	69											



Հավելված 5: Փորձնական ուսումնասիրության զեկույցի առաջարկվող կառուցվածքը

**(Նախագիծ տարբերակ 0.3)**

1. Նախապատմություն (1-2 էջ)
  - a. Ընդհանուր տեղեկատվություն
  - b. Թվինինգ նախագիծը և ՏՀՏ վիճակագրության մասին ԵՄ կանոնակարգը
  - c. Հայաստանում ՏՀՏ օգտագործման փորձնական ուսումնասիրության անհրաժեշտությունը
2. Մեթոդաբանություն (3-4 էջ)
  - a. Համակցություն և ընտրանք
  - b. Հարցերի ընդհանուր ներկայացում (հարցաթերթիկները հավելվածներում)
  - c. Տվյալների հավաքագրման մեթոդ
3. Փորձնական ուսումնասիրության փորձը (7 կազմակերպությունների հետազոտությունից, 5 – հանրային մարմինների հետազոտությունից)
  - a. Ընդհանուր կարծիքը
  - b. Խնդիրներ կապված պատասխանների չստացման հետ
  - c. Ռեսպոնդենտների կարծիքը՝ կազմակերպություններ և հանրային մարմիններ

Խնդիր 1

Խնդիր 2

4. Հայաստանում ՏՀՏ օգտագործման վերլուծությունը
  - a. Ձեռնարկություններ – ընտրված աղյուսակներ և գծապատկերներ (7 էջ)
  - b. Հանրային մարմիններ – ընտրված աղյուսակներ և գծապատկերներ (4 էջ)
5. Փորձնական ուսումնասիրությունից պարբերական հետազոտություն (5 էջ)

Հավելվածներ

- a. Հարցաթերթիկ կազմակերպությունների համար
- b. Հարցաթերթիկ հանրային մարմինների համար
- c. Հրահանգներ և բացատրություններ
- d. Ցուցանիշների մանրամասն վերլուծություն

## **Հավելված 6: Փորձնական ուսումնասիրության զեկույցի 4 գլխի առաջարկ “Փորձնական ուսումնասիրության արդյունքների վերլուծություն**

Առաջարկություն հետազոտության արդյունքների հակիրճ զեկույցի համար, որը կարելի է ներկայացնել փորձնական ուսումնասիրության զեկույցի գլուխ 4, կամ մասնակի օգտագործել որպես մամուլի հաղորդագրություն:

1. Ձեռնարկություններում համակարգիչների և Ինտերնետի օգտագործումը
2. Ինտերնետ կապի տեսակը
3. Վեբ կայքերը և դրանց հնարավորությունները
4. Հանրային մարմինների հետ Ինտերնետի միջոցով շփման նպատակը
5. Ձեռնարկությունների միջև էլեկտրոնային սովալների փոխանակում
6. Էլ- բիզնեսի համար S2S համակարգեր ունեցող ձեռնարկություններ
7. Էլեկտրոնային ցանցերի միջոցով էլ կոմերցիա

Անհրաժեշտ է ընտրել մեկ գծապատկեր յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ և ներկայացնել այն փորձնական ուսումնասիրության զեկույցի գլուխ 4-ում. Ի լրումն անհրաժեշտ է նաև ընտրել հանրային մարմինների համար համապատասխան գծապատկերները:

## **Հավելված 7: Բարդ հարցերի քննարկում և տրամաբանական վերահսկում**

Որոշակի առաջարկություններ Եվրոստատի մեթոդաբանական ձեռնարկից՝

### **1. Ձեր կազմակերպությունը օգտագործում է համակարգիչներ, ունի համակարգիչներ, կամ արդյոք կա այլ կազմակերպություն որը մատուցում է Ձեզ S2S ծառայություններ**

"Օգտագործել" տերմինը չի վերագրվում նմանատիպ ապրանքների և ենթակառուցվածքի սեփականությանը: Օրինակ՝ համակարգիչները կարող են պատկանեն ձեռնարկությանը, կարող են վարձակալվել և օգտագործվել այլ ձեռնարկության հետ համատեղ: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ համակարգիչները և այլն օգտագործվում են հետազոտության մասնակից ձեռնարկության կողմից, սակայն տրամադրվել են կամ սպասարկվում են այլ ձեռնարկության կողմից համարվում է, որ դրանք օգտագործվում են հետազոտությանը մասնակից կազմակերպության կողմից: Ի լրումն, ձեռնարկությունները հաճախ գնում են S2S ծառայություններ, որոնք վերաբերվում են S2S օգտագործմանը (օրինակ՝ հաշվապահություն): Այն դեպքերում, երբ S2S ծառայություններ, կամ այլ S2S ծառայություններ ներառող ծառայությունները ամբողջովին մատուցվում են այլ կազմակերպության կողմից և մասնակից կազմակերպությունը չի օգտագործում S2S այդ գործառնության համար, ապա այն չի հաշվառվում որպես այդ կազմակերպության կողմից S2S օգտագործում:

Որոշ դեպքերում կլինի S2S օգտագործման հետազոտությանը մասնակից կազմակերպության և S2S ծառայության տրամադրողի (այլ կազմակերպություն) սովալների խարնորդ: Այս դեպքերում հարցերից պետք է պարզ դառնա, թե ինչպիսի

գործունեությունները կհաշվառվեն որպես հետազոտությանը մասնակից կազմակերպության S2S օգտագործում:

## 2. Ձեր կազմակերպությունը ունի վեբ կայք

Որոշ օրինակներ մի քանի հարցերի մեկնաբանման մասին`

Որոշ դեպքերում ձեռնարկությունում S2S ներառումը չի նշանակում S2S օգտագործում այլ այն, որ կազմակերպությունը առաջարկում է որոշ թվային լուծումներ: Մեկ կարևոր օրինակ է վեբ կայքի գոյության հարցը, որտեղ հարց է տրվում այն ունենալու և ոչ օգտագործելու մասին և դրա հարցն է այդ լուծման տրամադրումը հաճախորդներին, հաշվի չառնելով այն հանգամանքը, թե ինչպես է կայք էջը սպասարկվում:

Այս դիտարկման փոփոխականը չի վերագրվում կայքի սեփականությանը այլ կայքի օգտագործմանը կազմակերպության կողմից իրենց “բիզնեսի” ներկայացման համար: Այն ներառում է ոչ միայն կայքի գոյությունը, որը գտնվում է սերվերի վրա, որը պատկանում է կազմակերպությանը, կամ կազմակերպության գրասենյակներից մեկում, այլ նաև երրորդ կողմի կայքերը (օր` կազմակերպությունների մի խումբ, որին դրանք պատկանում են)։

## 3. Հանրային մարմինների հետ համագործակցության համար Ինտերնետի օգտագործում

Քանի որ կառավարության “հանրային մարմինների” կարողությունները տարբերվում են տարբեր երկրներում, հասկացությունը մտում է որքան հնարավոր է լայնածավալ` հանրային մարմինները վերագրվում են հանրային ծառայություններին և վարչական գործունեությանը:

Հանրային մարմինները կարող են լինել ազգային կամ մարզային մակարդակի վրա, ինչպես նաև քաղաքի և քաղաքապետարանների մակարդակի վրա: Դրանք կարող են նույնիսկ լինել “մասնակի կառավարական”, օր` հանրային գրադարաններ, հիվանդանոցներ, համալսարաններ և այլն

Անհրաժեշտ է նշել, որ “շփում” բառը այս հարցում վերագրվում է երկու կողմերին` պարզ տեղեկատվության ստացումից մինչև էլեկտրոնային եղանակով հարցման լրացումը: Պարզաբանումները, կամ տեղեկատվության ստացման հարցումները, որոնք էլեկտրոնային եղանակով տրվում են հանրային մարմիններին չենք հանդիսանում պատասխանների շրջանակը:

Ինտերնետ կապը և արագությունը

(1)	(2)						(3)
Speed	Data Transmission Technology (in broad terms)						Question B3
(Mbps)	ISDN/Dialup	DSL	VDSL	DOCSIS 2.0	DOCSIS 3.0	FTTH/B	(demand) Model
							Questionnaire
120					120 Mbit/s	120 Mbit/s	>= 100 Mbit/s
100							[30-100) Mbit/s
50			50 Mbit/s				
40				40 Mbit/s			
30							22
25		25 Mbit/s					[10-30) Mbit/s
20					20 Mbit/s		

## **Հավելված 8: Փորձնական ուսումնասիրության զեկույցի 5 –րդ գլխի նախագիծ տարբերակ**

### **5. Փորձնական հետազոտությունից պարբերական հետազոտություն**

SZS-ի օգտագործման պարբերական հետազոտությունների նպատակն է արտադրել ԵՄ չափանիշներին համապատասխան վիճակագրություն կազմակերպություններում SZS-ի օգտագործման վերաբերյալ և որպես հնարավոր լրացում ազգային շահերի համար կազմել վիճակագրություն պետական հանրային մարմինների կողմից SZS-ի օգտագործման վերաբերյալ: SZS վիճակագրությունը շատ դինամիկ է և հարցաթերթիկում նշված հարցերը կարող են տարբեր տարիների ընթացքում փոփոխության ենթարկվել սպառողների և քաղաքական գործիչների պահանջներին համաձայն:

Առաջարկությունները առնչվում են կազմակերպություններում SZS-ի օգտագործման հետազոտությանը, սակայն դրանք կարող են ադապտացվել նաև հանրային մարմինների հատվածի համար: Նախքան հաջորդ հետազոտությունների պլանը կազմելը հարկավոր է հաշվի առնել հետևյալ հիմնահարցերը՝

#### ***Վիճակագրական արտադրանք***

Վիճակագրական արտադրանքը ունի արտադրվող վիճակագրական տեղեկատվության հստակ նկարագրություն: Վիճակագրական չափումները օգտագործվում են որոշակի խմբերում բոլոր վիճակագրական միավորների համար որոշակի փոփոխականների արժեքների ամփոփման համար: Նմանատիպ չափումների համար կարող են օգտագործվել ագրեգատների ձևաչափը (օր՝ “ԱՅՈ” պատասխանի ընդհանուր քանակը որոշակի հարցերի դեպքում), կամ ցուցանիշներ (օր՝ “ԱՅՈ” պատասխանների տոկոսը):

Ագրեգացումը հնարավոր է կազմել ողջ համակցության, կամ նախապատմությանը առնչվող փոփոխականների կողմից սահմանվող տարբեր ենթակամակցությունների համար (օր՝ NACE կատեգորիա, կամ չափսի խումբ), կամ այլ ուսումնասիրության փոփոխականների պատասխաններով սահմանված ենթահամակցությունների համար (օր՝ լայնաշերտ կապի օգտագործողները ընդդեմ ոչ լայնաշերտ կապի օգտագործողների): Ցուցանիշները ստանալու համար (համամասնությունը, տոկոսները, հարաբերակցությունը և այլն), ագրեգատները պետք է բաժանվեն համապատասխան ընդհանուր համակցության, կամ ենթահամակցության:

Վիճակագրական արտադրանքի կարիքները գնահատվում են քաղաքական գործիչների, բիզնեսի և սոցիալական կարիքներին համաձայն:

#### ***Հետազոտության ծածկույթը և դասակարգումը***

Հայաստանի կազմակերպություններում SZS օգտագործման հետազոտության ծածկույթը կարող է համապատասխանել ԵՄ Անդամ Պետությունների հետազոտություններին՝ ներառյալ նվազագույնը տասնաշխատակից ունեցող կազմակերպությունների համար: Ապագա հետազոտություններում, անհրաժեշտության դեպքում է ՀՀ ԱՎԾ կարող է ընդարձակել ծածկույթը (օր՝ հետազոտության շրջանակում ներառել 10 –ից քիչ աշխատակից ունեցող ձեռնարկությունները): Առաջարկվում է հետևել տնտեսական գործունեությունների միջազգային դասակարգմանը (NACE rev. 2) և կատարել ձեռնարկությունների խմբավորումը միջազգային փորձին համաձայն ըստ չափսի (հնարավոր լրիվ դրույք աշխատակիցների քանակը):

Հանրային մարմինների կողմից SZS օգտագործման հետազոտությունը կարող է ներառել տարատեսակ հաստատություններ՝ կառավարություն, նախարարություններ, թաղապետարաններ, առողջապահական հաստատություններ և այլն: Սահմանափակ

ռեսուրսների առկայության դեպքում հետազոտությունը կարելի է չիրականացնել ամեն տարի, կամ հաստատություններում ՏՀՏ-ի օգտագործման տարեկան հետազոտությունը կարող է կետնրոնանալ տարբեր տեսակի հաստատությունների վրա:

### ***Տվյալների հավաքագրման մեթոդը***

Կարևոր է հավասարակշռել սպառողների կարիքները հասանելի ռեսուրսների և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետ: Ռեսուրսների անհրաժեշտությունը մասնավորապես կարևորվում է տվյալների հավաքագրման մեթոդի ընտրության և ընտրանքի չափսի համար: Այսպիսով, ՀՀ ԱՎԾ պետք է հավասարակշռի հասանելի ռեսուրսները սպառողների կողմից պահանջարկ ունեցող տեղեկատվության հետ՝ ներառյալ արդյունքների մանրամասն մակարդակը և ցանկալի որակը: Միջազգային մեթոդաբանության և չափանիշներին համաձայն տվյալների հավաքագրման համար հնարավոր է կիրառել ներքոբերյալ մեթոդները՝

- Տվյալների հավաքագրում հարցազրուցավարների կողմից
- Տվյալների հավաքագրում փոստի միջոցով հարցաթերթիկի ներկայացմամբ
- Տվյալների հավաքագրում էլ-փոստի միջոցով

### ***Հետազոտության հարցաթերթիկները***

Հետազոտության հարցաթերթիկները պետք է ունենան պարզ և տրամաբանական կառուցվածք: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար առաջարկվում է օգտագործել ֆիլտր հարցեր, որոնք պետք է ուղեկցվեն հրահանգներով: Փոստի միջոցով հարցաթերթիկի ներկայացման դեպքում հրահանգները պետք է ուղղված լինեն կազմակերպություններին, մինչդեռ հարցազրուցավարների միջոցով հետազոտության իրականացման դեպքում, դրանք կվերաբերվեն հարցազրուցավարներին և պետք է պարունակեն պարզ սահմանումներ և բացատրություններ օր՝ տեխնոլոգիական տերմինաբանություն (հարցաթերթիկները ներկայացված են հավելվածներում):

### ***Շերտավորումը և ընտրանքի չափսը***

Առաջին հետազոտության համար լավագույն ընտրություն է իրականացնել ամբողջական համատարած հետազոտություն: Մա լավ հիմք կհանդիսանա առաջկա տարիներին ընտրանքային հետազոտությունների կազմակերպման համար: ՀՀ ԱՎԾ –ի բիզնես ռեգիստրի ժողովրդագրական տեղեկատվության համաձայն հետազոտությունների չափը կլինի մինչև 3,032 կազմակերպություն (2010 թ. տվյալներ). Կազմակերպությունների ժողովրդագրությունը շատ կենտրոնացված է Երևան քաղաքում և հետազոտության արդյունքները հավանաբար կարելի է բաժանել մայրաքաղաքի և այլ մնացած մարզերի միջև: Այլ մարզերում գործում են սահմանափակ քանակությամբ ձեռնարկություններ (10 և ավելի աշխատակից ունեցող) և յուրաքանչյուր մարզի համար վիճակագրության արտադրանքը բարդ է՝ հաշվի առնելով տվյալների գաղտնիությունը: Մրան կարող է նպաստել 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպությունների համատարած հաշվառման անցկացումը, ինչը առնչվում է ավելի խոշոր ծախսերի հետ:

Որպես կանոն՝ շերտավորումը և ընտրանքի չափսը որոշվում են հիմնվելով տարածման մակարդակի վրա և պետք է իրականացվեն աշխատակիցների թվաքանակի և տնտեսական գործունեության համաձայն: Ընտրանքի նախագիծը և արդյունքում ստացվող ընտրանքի չափսը պետք է նախագծվեն ստանալու համար ճշգրիտ, վստահելի և ներկայացուցչական արդյունքներ հետազոտության բնութագրերի վերաբերյալ:

Այս նպատակը հարկավոր է նվաճել բոլոր համամասնությունների համար, ինչպես նաև համակցության տարվեր ենթախմբերին առնչվող համամասնությունների համար:

Թվինինգ նախագծի ընթացքում ներկայացվել են վեց տարեր սցենարներ՝ հիմնվելով բիզնես ռեզիստրում առկա նյութերի վրա (չափսի խմբեր, NACE, մարզեր): Երկու այլընտրանք առաջարկվում են ապագա հետազոտությունների համար հետևյալ սահմանափակումներով՝

1. Ընտրանք միայն ազգային մակարդակի վրա (ԵՄ կանոնակարգին համաձայն) NACE 2 և չափսերի խմբերի տարածման բաշխմամբ – այս այլընտրանքը ամենահարմարն է՝ մասնավորապես ընտրանքային հետազոտության առաջին տարվա համար:
2. Ընտրանք Երևան քաղաքի համար (բաշխում ըստ չափսի խմբերի և NACE 2 տնտեսական գործունեությունների դասակարգման) և մնացած բոլոր մարզերը համատեղ (որոշ մարզերի հանրագումարի ներկայացում միայն NACE 2 դասակարգմամբ):

Վերջնական որոշումը պետք է ընդունվի հաշվի առնելով սպառողի կարիքները, հասանելի ռեսուրսները և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հիմնահարցերը:.

- ԱՊ փորձագետների առաջարկությունները ընտրանք կատարելու վերաբերյալ՝
- Ընտրանքը պետք է շերտավորված լինի պատահական ընտրանքով՝ հիմնվելով բիզնես ռեզիստրի տվյալների վրա;
- Անհրաժեշտ է օգտագործել աշխատակիցների թվաքանակը և տնտեսական գործունեությունը՝ համակցությունը շերտավորելու համար;
- Փոքր խմբերի բոլոր կազմակերպությունները (NACE rev. 2 և չափսի խմբերի կոմբինացիան), սահմանված 15-ից պակաս (պետք է որոշվի ՀՀ ԱՎԾ-ի կողմից) պետք է ներառվի ընտրանքի մեջ;
- Յուրաքանչյուր NACE rev. 2 խմբի կազմակերպությունների ստրատան պետք է կազմվի աշխատակիցների թվաքանակի խմբերով;
- Նյումանի, կամ այլ օպտիմալ դասակարգման միջոցը (աշխատակիցների թվաքանակով փոփոխականով), պետք է օգտագործվի յուրաքանչյուր ստրատայի ընտրանքի չափսի ընտրության համար;
- Յուրաքանչյուր ստրատայում պետք է կիրառվի պարզ պատահական ընտրանք:

### ***Կշռման արդյունքներ***

Տվյալների հավաքագրումից և տվյալների մշակումից հետո անհրաժեշտ է կշռել արդյունքները կազմակերպությունների քանակին համաձայն ընտրանքի անհավասարակշռությունը ճշտելու համար: Ընտրանքի ստրատան հնարավոր է նաև օգտագործել ծածկույթի միջև ստրատաների հնարավոր կոմբինացիայի կշռման համար: Էլ- կոմերցիայի մոդուլի քանակական փոփոխականները պետք է կշռվեն ընդհանուր շրջանառության/ընդհանուր գնումներին համաձայն:

Յուրաքանչյուր ցուցանիշի/ փոփոխականի(լինի դա համամասնություն կամ ընդհանուր արժեք) գնահատված ստանդարտ սխալը չպետք է գերազանցի 2 տոկոսը ընդհանուր համակցության համար և 5 տոկոսը՝ համակցության ենթախմբերի համար: Եթե վերլուծության ընթացքում բացահայտվեն ավելի բարձր ստանդարտ սխալներ, դրանք կարող են վկայել համակցության շերտավորման հետ կապված խնդիրների, կամ ընտրանքի կատարման խնդիրների մասին:

### ***Փաստաթղթավորում և տարածում***

Հետազոտության փաստաթղթերը պետք է պարունակեն արդյունքների վստահելիության գնահատումը. Ինչպես նաև արդյունքների համադրումը ԵՄ հետազոտությունների և ԵՄ մեթոդաբանության հետ:

Հետազոտության տվյալների (վիճակագրական տեղեկատվություն) տարածման հնարավորությունները`

- Մամուլի հաղորդագրություն – հետազոտության հիմնական արդյունքները;
- Հիմնական տեղեկատվությունը կայքում (հիմնական աղյուսակները);
- Մանրամասն տեղեկատվություն տվյալների բազայում` ARMSTATBANK.AM;
- Հիմնական տեղեկատվությունը ամսական հրապարակումներում
- Տարեկան հրապարակում “Ինֆորմացիոն տեխնոլոգիաները Հայաստանում ” – ըդհանուր տեղեկատվություն SՀS վիճակագրության և դրա հետազոտությունների (հնարավոր է իրագործել SՀS հատվածի վիճակագրության հետ համատեղ որպես հրապարակման առանձին գլուխ);
- Հատուկ վերլուծություն կարիքների և խնդրանքների համաձայն